

Թերթ կը զրկուի կանխիկ վճարողներու միայն:

ԲԱՅԱՆԻՒՆ

Պուշկինի
Տարի. 10 ֆր.

Վեցամս. 5

Արտասահման

Տարի. 12 ֆր.

Վեցամս. 6

Ամերիկա

2 Տ. 30 սենդ

ԿԱՆԻՍԻԿ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք կա
չեն տրուիր:

Հասցէ

DIBAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱԲԱԹԱՅԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵԾՏԱԿԱՆ

ОТГОВОРНИКЪ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, АДВОКАТЪ.

Ե. ՏԱՐԻ

ՅՆՎՐ. 5 ՇԱԲԱԹ 1902

ԹԻԻ 236

1902

Հայեցի հրճուանքն ունի աւետելու իր մեծարոյ ընթերցողներուն և ընթերցողհիններուն թէ բախտը կունենայ իրենց հետ մէկտեղ իր ոտքը դնելու 1902 տարին սեմին վրայ. Ոչ մէկերնուս — ոչ իսկ Հայեցիին — յայտնի չէ թէ այդ սեմէն ներս ինչեր կան պատրաստ մեզ գիմաւորելու: Անուշութիւնը, սակայն, անձանօթին մէջ կը պահուրտի, և եթէ մենք առաջուց գիտնայինք թէ ու չարածճի 1902 տարին ի՞նչ սիրուն և միանգամայն տղեղ անակնկալներ վերապահած է մեզ հայերուս համար, ապահովապէս մեր զգալիք հաճոյքին կամ տհաճութեան մէջ զգալի անկում մը պիտի կրէինք: Թող անկալ անձանօթ մնայ ուրեմն ու մենք, մեր բարի տփորութեանը համեմատ, յետագործ ակնարկ մը փռենք 1901 տարին վրայ որ ահա կռնակը մեզի դարձուցած սրարչաւ կը վազէ դէպի զոյգ անհունութեան և ոչնչութեան:

Այս փախչող տարիի ընթացքին մէջ ալ Հայեցի անաղարտ պահեց իր վճիտ պայծառութիւնը: անանկ որ իր առջեւն անցնող տգեղ, այլաւորակ, խեղ, աղտոտ, ինչպէս նաև սիրուն, գեղեցիկ, ազնիւ ու առողջ պատկերները՝ իրենց յետին մանրամասնութիւններուն մէջ՝ ցոյց տուաւ ճշգրիտ ցօլմունքներով, ի՞նչ եղաւ այս անկեղծ, անկողմնակալ, անխարդախ և ճշգրտիպ ցոլացումին հետեանքը, չառ քօհաժ բան մը՝ անոնք որ իրենց բարոյական այլանդակութեան, իրենց դէմքին ծամածռութեան, իրենց շարժումներուն անշնորհութեան, իրենց նայուածքներուն ան-

ճոռնիութեան յեղակաւ պատկերը մերկապարանոց տեսան Հայեցիին մէջ, ետ ընկրկեցան սարսափահար, և կտտղած՝ սկսան պոռալ, բողոքել, Հայեցիին դէմ որ արհամարհանքով գիտեց այդ ծոնքիչոտեան յարձակումները: Ասիկա հին յանկերգն էր, հինգ տարուան հնութեամբ հուրաբործուած կամ, աւելի ճիշդը սրբապղծուած: Հայեցի անդրդուելի մնաց այս ամէն՝ փոթորիկներուն մէջ, որոնց կուրծք տալու համար կորովը էր կը պակսի իրեն, աչ ալ տողունոնթիւնը: Բայց միւս կողմէ միսթարական երևոյթը կարգեցցիկ կեցուածքներու, բարեձև կերպարանքներու, ազնիւ ու անուշ գիմազութիւններու անաչառ պատկերացումին, որ տգեղին ու այլանդակին յաջորդելով փոխնիփոխ, տպաւորութիւններու սփոփարար հակակշիռ մը կը պահէր միշտ:

Այս հանդիսաւոր առթիւ խմբագրութիւնս կը ծանուցանէ թէ ամէն կողմէ շնորհագին համակրանաց արժանացած է Աժաւս Բոժոժիկ և Ընկ. ի հեռագրական գործակալութիւնն ալ որ արագատիպ մամուլի մը արագութեամբն ու ճշգրտութեամբը հասցուց իր լուրերը արտասահմանի հայկական ամէն անկիւններէն, և ամէն անկիւնի մէջ հնչեցուց իր բոժոժներուն մերթ զուարթ, մերթ տխուր, մերթ մեղանուշ զօղանջները: Ամէն նախաճոգ միջոց ձեռք առնուած է որպէս զի յաւաշիկայ 1902 տարւոյն մէջ ևս մեր Բոժոժիկը արագաթռիչ սաւառնի ամէնուրեք և իւր հնչիւնները սփռէ:

Արդարութիւնը պտրտք կը դնէ մեր վրայ շնորհակալութիւն յայտնելու այն ազնիւ անձներուն որոնք աշխատեցան ու կաշխատին Հայեցիին յարատեւութեանն ու տարածմանը, ու նաև անոնց որ քիչ չատ փրենց գրական աշխատակցութիւնը նուիրեցին մեզ:

Նոր տարին, ուր կը թեւակոխենք, Հայեղի անփոփոխ պիտի պահէ իր ուղղութիւնը. գէշին գէշ պիտի ըսէ, աղէկին աղէկ. ոչ մէկ նկատումի առջև կանգ պիտի առնէ, իսկ չպիտի սեպէ, և տգեղութիւններ, խեղութիւններ, անշնորհութիւններ ձաղկելու իր հնգամեայ սխառմը անդու անխոնջ պիտի շարունակէ. ասոր համար հոգը չընելով իր գէտ յարա ցանելիք շքութիւնամութիւնները, սնտի ատելութիւնները, հնտի կռկռոցներն ու գգգոհանքները:

Այս բոլորը ըսելէ ետք ուրիշ բան չի մնար ընել մեզ եթէ ոչ երկուր կեանք մալթել մեր ընթերցողներուն և Հայեղիին, այնպէս մը որ 1902ի սեմէն ներս մտնելէ յետոյ կարենանք ողջամբ ելլել մինչև անոր... տանիքը:

ԱՉԳԱՅԻՔ

Գեր. Վ. Մանկունի Օրբազան իր անձնակառնէն 300 ուկիի կալուած մը գնելով Օրթագլղի եկեղեցիին կտակեր է:

— Միթիթարեան երկհարկւրամեակի յորեկեանին առթիւ Պատուարթան Միաբանութեան ստացած դրամական նուէրներուն գումարը հասած է 10.084 ֆրանքի:

— Ասպետ Զունդի կտակին տրամադրութիւնները յառաջիկայ Մայիս 1էն պիտի սկսին գործադրուիլ: Աւտորեան հիւպատոսարանը պիտի ընտրէ 2 Հայ ուսանողներ, որոնք եւրոպա պիտի զրկուին արհեստական մասնագիտութեանց պտրսպելու համար, և որոնք իւրաքանչիւրին պիտի արուի տարեկան 2,000 ֆր. . Այդ երկու Հայ ուսանողներն առ այժմ պիտի բնակուին Աւտորիոյ կամ Հունգարիոյ մէջ բնակող Հայերէն: Իսկ երբ կտակին տրամադրութեանց համաձայն, կատարեալ գումարին տոկոսը բաւէ 6 ուսանող զրկելու եւրոպա, այն ատեն երկու ուսանողները Պատրիարքարանը պիտի ընտրէ Թուրքիոյ Հայերէն: Աւտորիական հիւպատոսարանը, անցեալ տարի Պատրիարքարանի մէկ հարցման ի պատասխան, կտակեալ գումարին և տոկոսներուն մանրամասն հաշիւը զրկած էր Ս. Պատրիարքին:

— Մանչէսթըրի Ս. Երրորդութիւն եկեղեցիին համար վերջերս յառուկ կանոնագիր մը խմբագրուելով՝ հրապարակ ելած է հոգաբարձութեան կողմէն, բաղկացած 28 յօդուածներէ: Այդ կանոնագրին մէջ ուշադրաւ յօդուածներ կան, որոնք Մանչէսթըրի Հայ Ժողովուրդին պարտքի և իրաւունքի սահմանը կը դժեն:

Կայս. իրաւէի մը համաձայն, առանց նախապէս թուրք կառավարութեան իմացնելու օտար երկիր բնակող թրքահայատակները եթէ մինչև իսկ գտնուած տեղերին օտարահայտակներու հետ ամուսնանան և ժամանակ անցնելէ յետոյ թուրքիա վերադառնան, դարձեալ իւրեւթուրքիոյ հպատակ պիտի նկատուին:

Յունվար 3 | 15 թուականաւ Բարիզէն քաղաւած հեռագրի մը նախելով՝ Պրանսացի դրամատէրք համաձայնած են 125 միլիոն ֆր. ի Պուլկարական փոխառութեան պայմանները քիչ մը թեթեւեղելու որպէս զի Սուլթանիէն կարենայ վաւերացուիլ:

Պոլսոյ Անգլիական դեսպանը բացարձակապէս յայտարարեց Բ. Գրան որ առևտրական ու է գաշնադիր չպիտի կնքէ իրեն հետ և մաքսային նոր սակագիններու գործադրութեան ալ պիտի հակառակի եթէ Բ. Գրանը նախապէս չհրատարակէ մաքսային և հանքային այնպիսի օրէնքներ որով վերջ տրուին վաճառականութեան դէմ այժմ յարուցուած հաշարումէկ տեսակ անտեղի գրծուարութիւններուն:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Ներկայիւս իմ խորին շնորհակալութիւնս կը յայտնեմ հեռեւեալ ազգասէր անձանց որոնք ի նպաստ տեղւոյս վարժարանին պարտուց բարձմանը ձեռնարկած հանգանակութեան իրենց աջակցութիւնը նուիրեցին:

Ի Պուրթէշ. — Տեառք Գր. Նազաշեան, Յ. Փափազեան, Ղ. Ավճեան և Գէ. Վասպուրականցի:

Ի Սուլիմա. — Տեառք Բ. Մարգարեան, Ղ. Զարեան, Կ. Ժամակոչեան, Վ. Մարտիրոսեան, Կ. Սէ-

Ֆերեան Մ. Յակոբեան, Կ. Եղիազարեան, Գ. Հասին-
եան, Յ. Յարութիւնեան, Գ. Գալուստեան, Յ. Խոր-
շիտ, Մ. Կոստանեան և Մ. Մխիթարեան:

Ի Պապատայ — Մ. Գառապեան, Ա. Ա. Ետիբեան
և Պ. Մէլտոնեան

Ի Թուլչա — Տեարք Երեւոմ և Գալուստ

Ի Պրոյիլա — Յէր Զափուշ, Հ. Ղազարեան, Մ.
Ասոյեան, Գ. Յովհաննէսեան, Խ. Գէորգեան, Միլիբ
Զափուշ և Ղ. Թոփիկեան

Ի Թէքուշ — Ս. Ալթունեան, Ս. Գրլըճճեան և
Թ. Հայպաթեան

Ի Պոլատ — Մ. Ասատուրեան

Ի Ֆորշան — Մ. Սեթեան

Ի Կարաց — Թ. Թրանգալեան, Մ. Մանուկեան
և Ղ. Պողոսեան

Ի Ռոման — Մ. Տէր Պողոսեան

Ի Եւշ — Յակոբ Յարութիւնեան

Ի Պոթուշան — Գր. Թաշճեան

Ի Սուշափա — Գ. Կաշա և Թ. Բամազանեան

Ի Պաքով — Տ. Գր. ՔՏՅ

Ի Բաւշո — Գ. Միսիրցեանց


Հրապարակաւ շնորհակալութիւնս կը յայտնեմ նա-
եւ վերոյիշեալ բաղաճները բնակող սիրելի ազգայնոցս
որք սիրալոճօր մասնակցեցան հանգանակութեան եւ նը-
ւիրեցին իրենց լուծմանը ի սէր ազգ. մանկուոյ դաս-
տիարակութեան

Տէր Յիսուս՝ որ այլուցն լուծան օրհնութեամբ
ընդունեց եւ բաժակ մը ցում ջուրին անկորուստ վարձը
խոստացաւ, ընդունի ի բարին բոլոր բարեպաշտ սիրելի-
եացդ նուէրները եւ իւր օրհնութիւններով պահպանէ
դոմենեւինդ. ամէն:

Վստնա 31 Դեկտ. 1901

Աղօթարար

ՍԱՐԳԻՍ ԲԷՅ ՂԱՐԻՊԵԱՆ



Ինչպէս խորհուրդս հրապարակաւ իր շնորհա-
կալիքը կը յայտնէ Ռումանիոյ եւ Սուշովայի այն
աղնիւ ազգայնոց, որոնք տեղւոյն Ազգ. վարժա-
րանի վերաշինութենէն մնացած պարտուց բարձ-
ման ի նպատակ տեղի ունեցած հանգանակութեան
մասնակցեցան ձեռամբ Արժ. Տ. Սարգիս Հայր
Ղարապետին:

Ս նամբ յարգանք

Ի դիմաց Թաղ Խորհրդոյ

Ատենադպիր Ատենապետ

Ս. Գաբրիէլեան Յ. Մ. Թովմասեան

2 Յունվար 1902 Վստնա

ԲԱՌԵՐՈՒ ՆՈՐ ՈԱՀՄԱՆՆԵՐ

Քաղաքային ամուսնութիւն — Շարժական
կալուած:

Այրիի ամուսնութիւն — Երկրորդ տպագ-
րութիւն որ շատ անգամ տալիսն համը չունե-
նար:

Շպար — Ուրազ եղեցկութեան ռեֆրան

Ալաֆրանկա — Ճաշակները խաբող ձեռնա-
ծու մը

Մօտա — Նոյն ընդ վերնոյն

Անաստիան տղատութիւն — Հաճոյքի համե-
մատ ընթացող հեղեղ մը որ ահն բան տակնու-
վրայ կընէ:

Սիրտ — Չարս թեան մայրը և բարս թեան
մօրուն:

Լեզու — Մտքին թարգմանը որ մերթ չեկ-
տար և մերթ թոյն կ'արտադրէ:

Արտաք — Անպատած սրտին անձրեք:

Մտածմունք — Անբարբառ ինքնախօսու-
թիւն:

Սէր — Հոգեկան անանցանելի ծարաւ:

Մտանկ սրդ — Ուրիշին ածած հաւկիթին
վրայ թխտող

Մեծապատիւ — Հասցնելու սովորական ա-
ծական մը որ չառերաւ հաւար հաւկնալու է
մեծա(ն) պատիւ:
Խ. Լ.

ՏԵՂԵԳԻՐ

Ամանս Բոժոժիկ եւ Բնի

Քամաթ քա

Կաղանդին օրը՝ Ռոստոմքէն մեկնող կառա-
խումբը՝ «հէտիլէիք բէշկէչիք» բսելով Քամ-
աթ քա բերաւ ձգեց ատտանդաշըշիկ վարժապետն
ու վարժուհին:

Կալաց

Առայժմ՝ մեր տէր պապին լեզուն առնուեցաւ
չպիտի կրնայ Վառնայի Տ Սարգիս քահանային
չորս հարցումներուն պատասխանել:

Մուտալլա

Կաղանդի առտուն բարեպաշտ խաթուն մը՝ վեր-
նատունը իր բովը կեցող տիկնոջ թաւալեալ մուշ-
աակին գրպանէն թաշկինակը թռցուցած ատեն
օձիքը ձեռք տալով բերանը բաց մնաց:

ԵՐԵՔ ՄՈԳԵՐՈՒՆ ՀԵՔԵԱԹԸ

ԾՆՈՒՆԴԻ ՊԱՏՄԱԹԻՒՆ

Երեք մոգերը՝ Մելքոն, Գասպար եւ Պաղտասար՝ ճամբայ ելած էին փնտելու Յիսուս մանուկը, միասին առնելով խունկ եւ զմուռս. Բայց Բեթլէհէմի ճամբան լաւ չգիտնալու պատճառաւ մոլորած էին. Խոր անտառէ մը անցնելէ յետոյ, իրիկուան դէմ, հասան Լանկրի լաւառին մէկ գլուղակը. Յագնած էին ուրումնաւէտ նիւթերով լի անօթներուն ծանրութեան ներքեւ. Բայց աւելի անօթութենէ եւ ծարաւէ կը տառապէին քոն խնշէնքէ. ուտի գիւղին առաջին տան դուռը զարկին. հիւրնկալութիւն խնդրելու համար.

Այս տունը, աւելի ճիշդ հիւղակը, սանդաձեւ. հոգէ մամուռապատ տանիքով մը, ուրկէ ջուրը կը մղէր տեղատարափ օրերուն, գրեթէ անտառին եղերքը շինուած, կը պատկանէր Տընի Փլօրիօ անուամբ փայտահարի մը, որ կապէր վերջին ծայր խնայողութեամբ, իր կնոջ եւ զաւկրներուն հետ. Երեք մոգերը՝ յագնութենէ դանդաղուն՝ դուռը զարկին. Ու երբ փայտահարը բացաւ, ընթերիք եւ օթեւան խնդրեցին.

— Ափսոս, բարեկամներս, պատասխանեց Փլօրիօ, միայն անկողին մը ունիմ ինծի. եւ խշտեակ մը զաւկներու համար. գալով ընթերիքին, խաշած գետնախնձորէ եւ հաճարի հացէ ուրիշ բան մը չենք կրնար տալ. Այսուհանդերձ հրամայեցէք, եւ եթէ շատ դժուարահաճ չէք, կը ջանանք ձեզ գոհացնել.

Ներս մտան. Իրենց հանուեցաւ գետնախնձոր, զոր մեծ աւորժակով լափեցին, եւ փայտահարն ու կինը անոնց տուին իրենց անկողինը, ուր հանդիստ պառկեցան, բացի Գասպարէ որ բծախնդիր էր իր հանգստութեանը համար, եւ խիստ նեղուած էր գեր Պաղտասարին եւ հսկայ Մելքոնին միջեւ.

Հետեւեալ առտուն, ճամբայ ելլելէ առաջ, Պաղտասար, անոնցմէ էն առատաձեռնը, ըսաւ Փլօրիօի.

— Ձեզի բան մը տալ կուզեմ, ձեր հիւրընկալութենէն շնորհապարտ ըլլալնու համար.

— Բայց, բարեկամներս, մենք մեր յօժար կամքովը ձեզ հիւրընկալեցինք, բան մը չենք սպասիր, պատասխանեց փայտահարը՝ ձեռքը երկնցնելով.

— Դրամ չունիմ, աւելցուց Պաղտասար, բայց ես քեզի յիշատակելի բան մը պիտի տամ որ անկէ շատ աւելի կարժէ.

Գրպանը խառնելով հանեց արեւելեան սը-

րինգ մը զոր Փլօրիօին տուաւ. եւ մինչդեռ այս վերջինը՝ քիչ մը յուսախաբ երեսը կը ծռմուռէր. Պաղտասար շարունակեց.

— Այս սրինգը չափելով, ինչ որ խնդրէք ձեզ պիտի տրուի. առէք, չարաչար մի գործածէք զայն, եւ երբէք մի մերժէք խեղճերուն ուղորմութիւն ու հիւրընկալութիւն.

Երբ երեք մոգերը հեռացան, Փլօրիօ դարձաւ իր կնոջ, արհամարանքով կշռելով ձեռքին մէջ պլտիկ սրինգը. — Որչափ չնչին բան սա սրինքը, այսուհանդերձ պիտի փորձեմ անգամ մը. տեսնելու համար թէ այս մարդիկը մեզ ծաղրած են թէ ոչ.

Այս ըսելէ ետքը աղաղակեց. — «Նախաճաշի համար ճերմակ հաց. խորտիկ եւ չի՛ մը գինի կուզեմ». Յետոյ երկրին մէկ եղանակը նուագեց փոքրիկ սրինգովը, եւ յանկարծ մեծ զարմանքով տեսաւ ճերմակ նուրբ սփռոցով մը ծածկուած սեղանին վրայ խնդրուած հացը, գինին ու խորտիկը.

Ալ ապահով իր սրինգին զորութեան, այդչափով չգոհացաւ, ուղեց մտքէն անցած ամէն բաները, առտուէնէ մինչեւ իրիկուն սրինգը կը չափէր. կնոջը եւ զաւակներուն համար նոր լաթեր ստացաւ, ծախսելու գրամ, շքեղօրէն պատրաստուած սեղան մը. եւ որովհետեւ իր բոլոր բաղձանքները անմիջապէս կը կատարուէին, քիչ ատենէն դուռառին մեծահարուստ մարդոց մէջ մին եղաւ. Իր կիսաւեր հիւղակեն տեղ փառաւոր դղեակ մը շինել տուաւ, զոր կահաւորեց թանգ կահերով եւ գորգերով, ու մեծ խնջոյք մը սարքեց իր նոր բնակարանին բացման հանգէսը կատարելու համար.

Շքեղապէս պատրաստուած սեղանի մը առջեւ, համակ լոյսով եւ արծաթեղէններով չողջուն, համախմբած էր տեղւոյն բոլոր երեսելիները, ու ինք կը նախագահէր սեղանին, փարթամօրէն հագուած կնոջը հետ, մինչ վերնաշարկէն նուագածուներու խումբ մը ներկաները կը զուարճացնէր զուարթ եղանակներով. Փայտահարը խնշայքը շխանգարուելու համար հրամայած էր իր մարդիկներուն՝ մուտքը արգիլել մտրացկաններուն, անոնց եւ ոչ մէկ առարկութեան անտալով. ու վերակացու գրած էր իր երկու աչալուրջ, հսկայ սպասաւորները, ներկաները՝ սրտի բուռն զեղումով մը՝ ինքզինքին տուած էին կերտ խումբի, եւ ընտիր գինիին աղգեցութեան տակ տղմկալի քրքիջներ կ'արձակէին:

Այդ իրիկունը երեք մոգերը մատուցանելով իրենց ընծաները յոռս Յիսուս՝ Մանուկին, Բեթլէհէմէն կը դառնային. Անտառէն անցնելու ատեն ճանչցան իրենց օթեւանած գիւղը, ու տե-

սան գղեակը՝ լուսափողփող, Գասպար՝ հեղեական չեչտով մը լսաւ Պաղտատարի։

— Կը փափաքիմ իմանալ թէ մեր մարդուկը սրինդը չարաչար չէ՞ գործածած և հարուստ ըլլալէն ի վեր գլխով թեմամբ վարուած է ողբատենքուն հետ։

— Տեսնենք, պատասխանեց Պաղտատար լաւինական կերպով։

Անմիջապէս իրենց պէս ճ հագուստները ցընցոտինք ըստ փոխելով, մուրացկանի տարազով ծըպտեցան, և ներկայացան զգեակին դրան առջև, գիշերուան համար հիւրընկալութիւն խնդրելու։ Շատ գէշ ընդունելութիւն գտան, և որովհետեւ աղմկալից կերպով կը պնդէին ընդունուիլ։ Փլօրիօ գլխիսը դուրս հանեց պստուհանէն, ու մուրացկաններ նշմարելով հրամայեց շուները արձակել հալածելու համար պանոնք, այնպէս որ մոգերը շտապեցին, իրենց բոլոր ուժովը, պրծիլ, առանց սակայն անմիաս փրկելու իրենց սրունքները։

— Մտքէս անցածը ելաւ, աղաղակեց սկեպտիկն Գասպար, որուն սրունքը խածած էին։

— Շատ աղէկ, աւելցուց հսկայ Մեղքոն. քիչ ատենէն պիտի սովորի թէ մոգերը ինչպէս կը լուծեն իրենց վրէժը։

Հրաւիրեալները կը ճաչէին ուրախ զուարթ։ Աղանդերին հասած էին, Փլօրիօ, գանակով մը խմորեղէն կտրելու վրայ էր երբ ոսկեզօծ սպասներով զարդարուած քառաձի կառքի մը աղմուկը լսուեցաւ բակէն։ Փլօրիօ նորէն գլուխը դուրս հանեց պստուհանէն, և տեսնելով որ գեռ աղանական հիւրեր կուգան, հրամայեց որ փութով վեր հանին զանոնք, զորս ինքը անձամբ դիմաւորեց սրահին դռնէն։ Երեք մոգերը ներս մըտան շքեղ կազմածով, թանկ քարերով փողփողուն ծիրանի ձորձեր հագած։ Փլօրիօ ճանչնալով իր նախկին հիւրերը, լաւ ընդունելութիւն ըրաւ և կրկնակի բարի գալուստ մաղթելով, աղաչեց անոնց՝ մասնակցիլ սեղանին։

— Շնորհակալ եմ, ըսաւ Պաղտատար ցուրտ չեչտով մը, մենք խեղճերը ատող մարդուն տունը հաց չենք ուտեր։

— Կը շնորհաւորեմ ձեզ, խստումնիդ, առանկ կը պտհէք, հէ՛, աղաղակեց Մեղքոն իր թաւ ձայնովը։

— Դուն շուները մուրացկաններուն վրայ վարձակես այնպէս չէ՞, աւելցուց Գասպար սրունքը շօշափելով, կեցի՛ր, ես քեզի քու երէքք չըսած մէկ եղանակդ պիտի նւագեմ։

Այս ըսելով Փլօրիօին տրուածին նման փոքրիկ սրինդ մը հանեց գրպանէն ու հնչեցուց ահեղագոչ։

Ակնթարթի մը մէջ սեղանը, հրաւիրեալները,


ըր. գղեակը անհետացան և փայտահարը ինքզինքը գտաւ անտառին եզերքը, իր կործանած խրճիթին առջև, կիսամերկ, ցոցոտիներով ծածկուած՝ կնոջը և զաւակներուն քով։

— Բարեբաղդաբար սրինգս քովս մնացած է, ըսաւ ինքնիրենը։ Իայց ի զուր պրպտեց իր ծակ գրպանները, բժժանքը անհետացած էր մոգերուն հետ։

Այն ատենէն է որ սովորութիւն եղած է (Փլօրիօնայի մէջ) խնամով մէկ կողմ դնել աղքատներու բաժինը, երբ կտրեն «երեք մոգերու կարկանդակը»։

Անտէ Խեղուի

ԿԱՂԱՆԴՁԷՔ



Ամէն կողմէ յայտնուած փափաղին գոհացում սալու համար, կաղանդի առթիւ Պ. Բոժոժիկ հետեւեալ խաղալիքները՝ կը նուիրէ արտասահմանի հայաթերթերուն։

Շարժումին. — Դրօշակեաններուն քաղաքը. Իրաւունքին. — Վերակազմեալներու պօռոն։

Հնչակին. — Մնծղաները թափած քէմ մը. Նոր կեանքին. — Քուքլա (պէպէֆ) մը որուն զսպանակաւոր սիրտը եթէ սեղմես՝ թեքը իրար գալով ծնծղայ կը զարնեն։

Դրօշակին. — Քիլօ մը վառօթ, հալալի Քիլեկներ շինելու համար։

Արմէնիարին. — Նստած տեղը ինքնաշարժի չալով նապաստակի քուքլա մը։

Հայրենիքին. — Խելքը պիտի թիւրիւ միութեան չպառկեցնող հաճի—եաքսաղ մը։

Ձայն Հայրենեացին. — Մինակ երեք ձայն (տօ, րէ, մի) զարնող պղտիկ քիւննօ մը։

Կոչնակին. — Հաւատացեալները դէպի ս. լեւոնաց երկիրը (Ամերիկա) կանչելու համար գոռոնա մը։

Անահիտին. — Մէկ երեքը սե միւրը ճերմակ ցուցնող հոգկապալի տետրակ մը։

Լոյսին. — Իր ճառագայթները աշխարհի չորս կողմը սփռելու համար խառաքարոէ սրընթաց շրմէնքմէն մը։

Լ'Ամէնիին. — Դիւանագիտութիւնը հետապնդելու համար շաւիկ քօք մը։

Ժամանակին—Ծայրը մանքաւ կախուած թիթեղէ հրացան մը .

Ազատ Խօսքին—Ձուրը կտրող թիթեղէ թուր մը .

Ժողովուրդին Համարին—Մուխավայէ թը-
նաւքէք մը .


Փարոսին—Ձուլալ մը ժըթոն .

Արշալոյսին—Եգիպտոսի մէնծ աղանձրը
զբօցնելու համար տասնոց տխրիկ մը .

Փիւնիկին—Աղեքսանդրիոյ առաջնորդա-
րանը մուտ գտնելու համար անւառոր ոտքերով
այծէ ֆոխալ մը .

Միութիւնին—Քովէն լարուելով շարժող ու
ձայն հանող վանդակի մէջ թառած խաւտքարտէ
քաքաղան մը .

Հայելիին—Թուլթէ պօռագան մը .



ՊՈԼՍԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

ՖԵՌԹԻՔ

Գրեթէ ութը տարի առաջ կաղանդին առ-
ջի օրը գործի մը պատճառաւ Մագրի գիւղ եր-
թալ որոշեցի . ուստի Սիրքէճի կայարանը հա-
սայ .

Կառախումբը պատրաստ կը կենար . բազ-
մութիւնը, կարեւոր թուով, տոմեակներ գնելու
կը փութար . Իրարու ետեւէ փոքր ինչ կը հըր-
մշտէին : Ես, իմ կարգիս, մայր և աղջկան մը
կը հետեւէի որոնք հասան վերջապէս կիշէին առ-
ջեւ ուր մայրը՝ գրամ տալով տոմսակազմադին
միամտօրէն ըսաւ .

—Իքի թանէ Մայր-Եկեղեցի վէր եավրում .

Աղջկը ան Էի՛ապէս ընդ մի շերով .

—Քա չէ տուտու, ի՞նչ կըսես . (Տոմսակա-
վաճառին դռնաւով) —Իքի թանէ Գում գարու
վէր, միւսին .

Քիչ յետոյ, կայարանին զանգակը հնչելով .

Հոգեկառքը սուլեց և կառախումբը սկսաւ յա-
ռախանալ .

Պարապ նստելէ չեմ ախորժիր . ուրիմն դի-
տեցի շուրջս խօսակից մը գտնելու համար և ին-
ծի պէս կղակին «գամը փրթած» մը գտայ որ
գիմացս քիչ մը անդին կը նստէր . Սկսանք խօ-
սիլ միասին .

Հինգ վայրկեանը չանցած Գում գարու հա-
սանք ու կառախումբէն բուսական մարդ դուրս
ելաւ . փոխադարձաբար 8-10 հոյի չափ ալ ներս
մտան : Քօնսիլթէօնը, կառախումբին ճամբայ ել-
լելու հրամանը շոգեկառքի մեքենավարին տա-
լու համար՝ սուլելէ յետոյ, ըստ սովորութեան
գոչեց . —«Ֆէ՛ռթիք» .

Նոյն պահուն 50 տարեկան կին մը կայարա-
նէն դէպի կառախումբ շնչասպառ վազելով՝ պօ-
ռաց .

—Աման քօնտօքթօն, պօխճամը շւ վակին-
տա ունութտում, տուր քի ալայըմ .

Բայց քօնտիւքթէօնը չլսելով, մեքենավա-
րին կրկին անգամ ճամբայ ելլելու համար գոչեց .
—«Ֆէ՛ռթիք» .

Այս անգամ կինը կարծեց թէ քօնտիւք-
թէօնը իրեն է որ կը պատասխանէր տաճկերէն
լեզուաւ «վէրտիք» ըսելով, այսինքն «տուինք» .
ուրեմն պաղատանօք անոր ըսաւ .

—Քա չէ օրթթի՛ իրաւորա վէրմէտին . ա-
ռապատա գալտը .

Ու սկսաւ կառախումբին ետեւէն վազել, էր-
կու աչքդ քէօննա, նէրէ՛յէ վէրտին, կէօղ կէօրէ
պօխճաս պիտի ուտէ՞ պոռալով .

Այս իրարանցումը խնդիրը որոշելով՝ ցոյց
տուած կառքին մէջէն բարեսէր անձ մը տիկնոջ
մոռցած ծրարը վախօնին պատուհանէն դուրս նե-
տեց, որով «Ֆէ՛ռթիքին» ու վէլ տիքի՞ն այս զու-
արճալի տեսարանը վերջացաւ .

ՊԵՍԷ

ՏԻՊԱՐ ԴԱՏԱԻՈՐ ՄԸ

Քիչ շատ հարստութեան տէր բարեսէր ան-
մը՝ հաւատարիմ կարծած իր մէկ խարդախ բա-
րեկամին 50 ոսկի փոխ հրատայ, վեց ամիս պայ-
մանաժամով, առանց մուրհակի և տոանց վկայի
ամայի տեղ մը : Երբ պայմանաժամը կը լրանայ,
դրամը ետ կը պահանջէ . Պարտապանը ոչ միայն

կուրանայ գրամ առած ըլլալը այլ կը յայտարարէ թէ զինքն ալ չի ճանչնար. Ասոր վրայ պահանջատէրը կը պարտաւորի դատարան դիմել.

Դատաւորը կը հարցնէ անոր, — Յիսուն ոսկի տուած ըլլալա՞յ մուրհակ մը ունի՞ն.

Պահանջատէրը. — Աւաղ, տէր դատաւոր, ոչ վկայ տեսիմ ե ոչ մուրհակ.

— Ուրեմն ինչո՞վ պիտի կրնաս հաստատել.

— Այգիէն վերադարձած ատեննիս ուզեց. ես ալ զինքը շիտակ մէկը կարծելով՝ հանեցի առիւ. քովերնիս ալ մարդ չի կար. հիմա եթէ կուրանայ պէտք է երգենու այն գերեզմանաքարին վրայ որ մեր ճամբուն վրայ էր, և որուն վրայ համրեցի դրամները. թող երգում ընէ չառնելուն, ես ալ ծիւղը կը յանձնեմ իրաւունքս.

Դատ. — Ուրեմն շուտով գնա հոս բեր այդ ըսած քարդ որ երգուի.

Պահանջատէրը. — Անմիջապէս տէր իմ, ըսելով գուրս կը վազէ.

Դատաւորը անոր ետեւն խնդարով պարտապանը մէկ կողմ կը կանչէ ու մտերմօրէն կամայ մը կը հարցնէ. — Ի՞նչ կըսես, այս թեթեւօլիկ մարդը պիտի կրնայ այն քարը բերել.

Պարտապանը. — Ո՛չ տէր իմ, ահագին քար մըն է, շատոնց ի վեր թաղուած, տասը մարդու կարօտ է որ հոս բերուի.

Դատաւորը. — Բանի որ քարը կը ճանչնաս որ շատ մեծ է, պէտք է պարտքդ ալ ճանչնաս, որ շատ արդար է.

Կոմսանձիդիանոս

Մարդատեսացի մը յուշատետրէն քաղուած.

«Արծիւ մըն է, առիւծ մըն է կըսեն երբ գերազանց, քաջարի մարդ մը ցուցնել ուզեն. Ասկից կը հետեւի թէ ամենէն մեծ պատիւը զոր կարելի ըլլայ ընել մարդու մը, զանիկա կենդանիի մը նմանցնելն է... Ես ալ ճիշդ այս կարծիքէն եմ:

Պատժական ատենին մէջ

— Ամբաստանեալ, արդէն տասներմէկ դատապարտութիւն կրած էք՝ դատարկապորտութեան, մարդ վիրաւորած ըլլալու, վտառահութեան զեղծումի, խաբեքայութեան համար և այլ յանցանքներով.

— Տէր նախագահ, հաճեցէք աւելի կծուաց խօսիլ, ապագայ աներս սրահին մէջն է.

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՕՐԱՑՈՅՑ

ԲՈԺՈԺԻԿԵԱՆ

Վասն

1902 Թուականին մերոյ

Յունվար 1

Այսօր զարբ մրգավաճառաց, ուսուցչաց, աշակերտաց և խաղաժողից ուրախանան ընդ ճշնութիւն տարեդարձին օրացուցական: Տօն ճիւղերէնէն, որք ի վերայ եօթը բախի յաւելուն ըզդէսոս բազումս.

Ձերտէ Բէլթէ Գուրթունասը

Պատմական. — 1899. Տարեկան 15 ոսկիով տուն մը վարձող քարտուկենց Մելիքն աղայն իր աղքատիկ տանտիմով փոխ առած 15 ոսկին տեղ իբր տոկոս չորս տարի միութեամբս զէ պիտի աճի անոր տունը նստելու համար բարեկեցաբար (?) մոխայեղէ մը կ'ստորագրէ.

Յունվար 6

Տօն բահանայից և ժամակաւաց, — յաղագս հաւաքելոյ զանօրհնէն եւ զյիշեցիքն.

Նախանձորքը ոմանք կամաւ անկանին 'ի ծով գինահոս, և ելանէն զօղահար.

Ախորժիլի աւուրք գինեպանաց

Պատմական. — 1897 Հոգեւորական Առնամ Չտամ Ստամբուլ պատմութիւնը պիտի հրատարակեմ ըսելով կարգ մը ազգայիններէ կլորիկ գումար մը հանգանակելէ ետքը կծիկը կը դնէ.

Յունվար 14

Սկիզբն առատութեան ստարէ—սանսանց վասն տօնախմբութեան Յովհաննէսից եւ Մկրտչից.

Թեթեւային պարզութիւնը սիրահարային ի տեղիս

Պատմական. — 1899 Մարիձա գետին տէր քօնեաք պապան, արստօլին գինետանը մէջ ֆրչիին տակը սըզաքի կըլլայ.

Փետրվար 17

Աճէլէ թէրթիպ հանգէսը հարսանեկան անձարակաց.

Ախորժիլի աւուրք անուշիկենավաճառաց.

Քսակային պարզութիւնը.

Պատմական. — 1899 Հիւրմիւզեան Տ. Գէորգ բահանան կրկնաժողովութիւն մը կընէ եւ եօթը ամիս փիլոնը վրայ կուտայ.

Փետրվար 21

Տօն Վարդանանց զորավարաց.

Պատմական—1899 Ֆիլիպեի մէջ Արմենականք եւ Դրօշակեանք վարդանանց հանդէսը կը կատարեն . . . զիրար ծեծելով.

Փետրվար 24

Պարասրահք, թատրոնք, պողոտայք և մէյտանք լի են բազմութեամբ զիմակաւորաց. Բազմութեանք ապրանք ծախելէ գլուխ քերելու ժամանակ չունին. Յայսմ գիշերի մեծ տօն է խուռու զահրէճոց. որ յիտ պատրաստելոյ բղբիշիէն և զշիշիէն ֆասուլիան՝ մինչեւ առաւօտ աշխատին սրբել զտրամս և զթէրագիս, պէլքի ալ էլէլէմիշ ընել.

Պատմական.—1898—«Լուսին»-ի կը յայտարարէ թէ «Հնչակեանները ու Դրօշակեանները մինչեւ հիմա Հայ ազգէն 50,000 ոսկիէն աւելի դուսար մը կորցած են իրենց դանակը անոր կոկորդին կրթնցնելով».

Փետրվար 25

Ելանեն ի թափոր ամենայն սիւրբերկէճիք և արինաճիք, մեծաձայն հրաւիրել զյաճախորդուհիս տնտեսագէտս որք յաւելեալ կերակրօք թռաւքաւս առնեն ըզսիւրբերկէս և զարինաս.

Պատմական—1902րդ տարեգարձ աճիւղէից ցըրտոյն, կծկտուճն պառաւանց յանկիւնս տանց, առ ահի. խշմին գալոյ աճիւղէական ցրտոյն որ վասն իւրհանցի փչեսցի և հոթն տիւ և ութ գիշեր տեեսցի.

Մարտ 1

Անորժելի աւուրք կամաւ հիւանդանալոց խոստովանահարց ոմանց որք համոզին, լոյսոյն զժողովուրդս պահս բռնել և ինքեանք ճաշակեն զպատուական բիւպաստըն գըզըրճըքի և զպատուական եալանճի տօլմասին ընդ լահանա թուրշուսի.

Մարտ 10

Յիշատակ անառակաց, խեաց եւ շողորդաց.

20րդ տարեգարձ ծննդեան հաւաքման արհեստին նետեալ սիկասաց ի պողոտայից եւ ի սրճարանաց.

Մարտ 20

Միջինք մեծ պահոց, պատրաստութիւնք նորածնութեանց.

Փոթորիկք ի տունս.

Տօթագին աւուրք դերձակուհեաց.

Պատմական—1899 կարգ մը քարեպաշտ տիկիններ Վառնայի եկեղեցիին մէջ «Մինտէր գավկասի» մը կը հանեն և ժամկոչին միջոցաւ վերնատունէն կը վստուին.

Մարտ 25

Սուգ ի ծով. մեծ կոտորած ձկանց.

Պատմական—1899 Հաւկիթ Դեղնուցեանը Վառնա կը հասնի.

(Շարունակելի)

ԱՅԻՆԵԻ ԼԵԹԱՅԻՓ

ՊԻՆ, ՊԻՐ ԱՏԷՏ

(ՄԻՒՆՏԵՐԻՃԱԹԸ)

Կիւտիւրիւճիւ ֆգրալար վէ Հիքեայէլէր. Մալիւմաթը ֆէննիյէ. Լուղաթը Լէթայիֆ. ֆէննի Էյլէնճէլէր վէ Բէսիմի Պիլմէճէլէր:

160 սահիֆէտէն իպարէթ օլուպ, բէյտէրբէյ նէշր օլուհան մէղքիւր քիթապըն պիւրինճի ճիւտի խիթամ պուլուպ, իտարէխանէմիզտէ սաթըլմագտա աւր. Ֆիյ 2 ֆրանք:

Մ. 2

ԱՐՏԱՍՈՒԱԹՈՐ

Սրտաշարժ բանաստեղծութեանց յանգաւոր տոյն փոքրիկ փնջիկը որ 32 էջերէ կը բաղկանայ, արժանի է բանասիրաց ընթերցմանը:

Գին 20 սանդիմ: Հատ առնողներու համար գոհացուցիչ զեղչ:

Կեդրոնատեղին է մեր խմբագրատունը:

Յառաջիկայ նոր տարւոյ առթիւ ամեն տեսակ Օրացոյցներ, թէ պատի և թէ գրպանի եկած ըլլալով, կը ծախուին Ա. Զարպհանէլեան գրատունը:

Печатница «Взаимность» — Варна